

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՆ ԲՈՒԺԻՉ ՊԵՆՈՒՂՆԵՐԻ՝ ՏՈՐՖԵՐԻ,
ՑԵՆՏԵՐԻ, ԿԱՎԵՐԻ ՆՈՐՈՎԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԴԻ
ԽՆԴԻՐՆԵՐԸ**

Մայսուրյան Կ.Վ., Հարությունյան Բ.Ն., Գրաբսկի Մ.Ա., Չիչակյան Ս.Մ.
Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության ԳՀԻ, Երևան, Հայաստան

Բանալի բառեր: *բնական բուժիչ պելոիդներ, ցեխեր, տորֆեր կավեր:*

Հասարակության զարգացման գիտատեխնիկական առաջընթացի ժամանակակից էտապում մարդու և շրջապատող միջավայրի փոխհարաբերության խնդիրների գիտականորեն հիմնավորված պարզաբանումը համարվում է էկոլոգիական բժշկության առաջնահերթ խնդիրը:

Այսօր ազգաբնակչության առողջության և առողջացման, կուրորտային բուժման, բուժական տուրիզմի զարգացման խնդիրները բարձրացված են պետական քաղաքականության մակարդակի: Առաջադրված բազմաբնույթ հարցերի լուծման գործընթացում առանձնանում են բնական բուժական ռեսուրսների ուսումնասիրման, առողջարանների, հանգստի գոտիների, տարածաշրջանին բնորոշ նոր ռեզիդենների իրացման, պահպանման և ռացիոնալ օգտագործման խնդիրները:

Բնական բուժիչ ռեսուրսների՝ հանքային ջրերի, բուժիչ պելոիդների (տորֆեր, ցեխեր, կավեր) արտահանման արդյունաբերական ծավալները հաճախ գերազանցում են արտադրության համար նախատեսված քանակները: Մասնագիտացված և ոչ մասնագիտացված կազմակերպությունների կողմից, առանց լիարժեք երկրաբանական հետազոտությունների անցկացման և էկոլոգիական նորմերի ապահովման, բուժիչ ռեսուրսների հանքավայրերի հորատանցքերի շահագործումը առաջ է բերում բուժական պրակտիկայում օգտագործվող հանքային ջրերի, կավերի, տորֆերի, ցեխերի հիմնական որակական ցուցանիշների (կոնդիցիայի) անթույլատրելի փոփոխությունների:

Բուժական պելոիդները (տորֆերը, կավերը, ցեխերը) համարվում են բնական բուժական ռեսուրսների ամենաարժեքավոր բաղադրիչներից մեկը: Հայաստանի Հանրապետությունում դեռևս չկան ընդերքի բնական ռեսուրսների համար հատուկ մշակված՝ մասնավորապես, բնական բուժիչ պելոիդներին ներկայացվող պահանջների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգ, այդ շարքին դասված և արդյունահանվող հումքի օգտագործման կարգ, օգտագործման պայմաններ և պահանջներ: Այս ռեսուրսների շահագործումը իրականացվում է նմանատիպ հանքավայրերի շահագործման համար ընդունված տեխնոլոգիական բոլոր նորմերի խախտումներով:

«Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲ ընկերությունը իր ստեղծման օրվանից՝ շուրջ 85 տարի զբաղվել և 156

VIII МЕЖДУНАРОДНАЯ КОНФЕРЕНЦИЯ
Современные аспекты реабилитации в медицине

զբաղվում է հանրապետության բնական բուժական ռեսուրսների բազմակողմանի հետազոտություններով, բնական բուժիչ գործոնների սեզոնային և ռեժիմային համալիր ուսումնասիրմամբ, մշտահսկմամբ, նոր բուժիչ գործոնների օրգանիզմի վրա թողած ազդեցության մեխանիզմների գիտականորեն հիմնավորմամբ, նրանց լիարժեք տարատեսակ օգտագործման, նպատակային օգտագործման առաջարկների, մասնագիտական գիտա-մեթոդական ձեռնարկների մշակմամբ:

Մեր հանրապետությունում դեռևս չկա բնական բուժիչ պելոիդների՝ ցեխերի, տորֆերի, կավերի արդյունահանված հումքի ժամանակից պահանջներին համապատասխանող դասակարգում, ինչը և հանդիսանում է լուրջ բացթողում դրանց բուժկանխարգելիչ և առողջարարական նպատակներով կիրառելու համար: Այս ոլորտը խիստ արդիական է թե՛ առողջարարական ինդուստրիայի, և թե՛ տուրիզմի տարբեր ճյուղերի զարգացման համար: Դրա համար անհրաժեշտ է իրականացնել բնական բուժիչ պելոիդների լիարժեք ուսումնասիրություններ՝ միաժամանակ ստեղծելով կադաստրային բանկ:

Հանրապետության կուրորտներում և առողջարանային համալիրներում օգտագործվում են այնպիսի պելոիդային բուժման միջոցներ, որոնց որակի վերաբերյալ բացակայում է մասնագիտական եզրակացությունը: Օգտագործվում են ոչ լիարժեք ուսումնասիրված, երբեմն նաև այլ երկրներից ներկրված անհայտ ծագման բուժման միջոցներ, որը խիստ անհանգստացնող փաստ է:

Բացակայում է Հայաստանի ընդերքի բնական հանքային բուժիչ պելոիդների նպատակային և գերակայական օգտագործման հիմնավորումները: Չեն կատարվում պելոիդների նույնականացում ըստ զգայաորոշման և քիմիական բաղադրության չափորոշիչների պահանջների, որոնք պետք է նախատեսված լինեն յուրաքանչյուր տեսակի պելոիդի տեխնիկական պայմաններում ու հրահանգում և պետք է իրականացվեն բուժիչ պելոիդների փաստաթղթային փորձաքննության և փորձարկման եղանակներով: Այնինչ, անհրաժեշտ է արդյունահանված բնական բուժիչ պելոիդների հումքը օգտագործել միայն երկրաբանական, պարբերական սեզոնային և ռեժիմային դիտարկումների, ֆիզիկական, քիմիական, ֆիզիկաքիմիական, միկրոկենսաբանական լաբորատոր ուսումնասիրություններից հետո, իսկ նոր, չուսումնասիրված հանքերի և հանքաերևույթների կոնդիցիայի բացահայտման համար, միաժամանակ պետք է սահմանված կարգով կատարել նաև համապատասխան ֆիզիոլոգիական հետազոտություններ:

Հաշվի առնելով վերը թվարկված հիմնախնդիրները, ինչպես նաև ուսումնասիրելով միջազգային փորձը և հաշվի առնելով Առողջապահության համաշխարհային կազմակերպության և Ռուսաստանի դաշնության այդ հարցի վերաբերյալ կիրառվող չափորոշիչները, ԱՊՀ երկրների մոտեցումները և օրենքները «Բնական բուժիչ միջոցների, բուժ-առողջարարական տարածքների և առողջարանների», «Առողջարանների Եվրոպական Ասոցիացիայի» (ESPA)՝

«Առողջարանների, հանգստյան վայրերի և բուժիչ աղբյուրների դասակարգման որակի ստանդարտներ» իրավական ակտերը, ՀՀ Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության գիտահետազոտական ինստիտուտի կողմից մշակվել է «Բնական բուժիչ պելլիդների՝ ցեխերի, տորֆերի, կավերի շարքը դասված և արդյունահանված հումքի օգտագործման կարգի» նախագիծը, որտեղ բազմակողմանիորեն, ժամանակակից միջազգային չափանիշներին համապատասխան, նորովի գնահատվել և դասակարգվել են Հայաստանի բնական բուժիչ պելլիդները՝ ցեխերը, տորֆերը, կավերը, տրվել են նրանց բուժ-առողջարարական նպատակով վերականգնողական և էկոլոգիական բժշկության, բուժական տուրիզմի բնագավառներում դրանց առողջարարական նպատակով կիրառման հնարավորությունները (ցուցումներ և հակացուցումներ):

Եզրակացություն:

Նորովի դասակարգումը հնարավորություն կտա բուժիչ պելլիդների՝ ցեխերի, տորֆերի, կավերի նպատակային օգտագործումը առողջարաններում վերականգնողական կենտրոններում, հիվանդանոցներում, ջրաբուժարաններում, հանգստյան տներում՝ որպես բուժական միջոցներ:

Անհրաժեշտ է:

1. Մշակել և կյանքի կոչել հսկողություն իրականացնող նորմատիվ փաստաթղթեր՝ բուժական ցեխերի արդյունահանման, պահպանման և օգտագործման վերաբերյալ՝ ըստ մանրէաբանական և ֆիզիկա-քիմիական ցուցանիշների, որոնք կերաշխավորեն դրանց նպատակային օգտագործումը (կիրառումը) բուժական նպատակով :

2. Բուժական պրոցեդուրաների ժամանակ ցեխեր օգտագործող առողջարանների և ցեխեր մշակող կազմակերպությունների արտադրական հսկողության ծրագրերում անպայման նշել բուժական ցեխերի նմուշների ընտրման կետերը և մանրէաբանական և ֆիզիկա-քիմիական հետազոտությունների բազմապատիկությունը:

3. Իրականացնել բուժական ցեխերի հետազոտությունների արդյունքների գրանցում՝ ըստ կուրորտային (առողջարանային) տարածքների:

Գրականություն

1. В.И. Бахман, К.А.Овсянникова, А.Д.Вадковская – Методика анализа лечебных грязей, Москва-1965
2. В.И.Чибураев – Методические указания по санитарно-микробиологическому анализу лечебных грязей, 1989
3. Классификация минеральных вод и лечебных грязей для целей их сертификации, 2000/34
4. Оценка санитарно-бактериологического состояния лечебных грязей различных типов, МЗ СССР , 1985
5. European Spas Association Quality Criteria of the European Spas Association (ESPA), Sanitary and holiday homes, standard of healing resources classification, Legal act 1.3.1
6. В.М.Боголюбов, В.С.Улаших Комбинирование и сочетание лечебных физических факторов. Физиотерапия, бальнеология, и реабилитация. 2004,2,с. 68-72